ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Սիգիշմի 1

№ 5261-Ա « 24 » դեկտեմբերի 2025 թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 11-Ի N 1348-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝

1. Երևանի քաղաքապետի 2025 թվականի ապրիլի 11-ի «Երևանի ենթակայության մի շարք համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների՝ 2025 թվականի եկամուտների ու ծախսերի և դրամական միջոցների հոսքերի նախահաշիվները հաստատելու մասին» N 1348-Ա որոշման 1-ին կետով հաստատված՝ «Ավանի մշակույթի տուն», «Երևանի «Սեբաստիա» մշակութային կենտրոն», «Երևանի Նոր Նորք վարչական շրջանի մշակույթի կենտրոն», «Երևանի Շենգավիթ վարչական շրջանի թիվ 5 մշակույթի կենտրոն» և «Զեյթուն մշակութային կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների 2025 թվականի եկամուտների ու ծախսերի և դրամական միջոցների հոսքերի նախահաշիվների NN 1-10 հավելվածները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն NN 1-10 հավելվածների:

2. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի համապատասխան վարչական շրջանների ղեկավարների և սույն որոշման 1-ին կետում նշված համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենների վրա:

3. Որոշման կատարման հսկողությունը վերապահել Երևանի քաղաքապետի տեղակալ Լ. Հովհաննիսյանին:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ